ՀԱՅԵՐԻ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայերի մարդաբանությամբ զբաղվել և առանձնահատուկ հետաքրքրություն են ցուցաբերել բազմաթիվ ուսումնասիրողներ։ Այդպիսի հետաքրքրության հիմնական շարժառիթը եղել է Առաջավոր Ասիայի երբեմնի հնագույն բնակչության մարդաբանական կերպարի առաջացման հարցի լուծման կարևորությունը, երբ Փոքր Ասիայում հայերն իրենց ֆիզիկական առանձնահատկություններով եզակի դիրք են գրավում։

Հարցի ուսումնասիրման գիտական կարևորությանը զուգահեռ դարիս. քսանական թվականներին հանդես եկավ նաև քաղաքական կողմը՝ հիմնականում կապված հայ ժողովրդի քաղաքացիական իրավունքների պաշտպանման հարցերի հետ։

Հայերի մարդաբանության գիտական ուսումնասիրության հիմքերը դրել է Լիոնի համալսարանի մարդաբանության պրոֆ. Լոնեստ Շանտրը, որը Ռուսաստան, Արևմտահայաստան, Կիլիկիա կազմակերպած երեք արշավախմբերի ընթացքում (1890, 1893, 1894 թթ.) մանրամասն մարդաբանական քննության ու չափագրության ենթարկվեց 341 հայերի (այդ թվում՝ 44 կնոջ)[1]։

Ճիշտ է, մինչև Է. Շանտրը հայերի մարդաբանական տվյալների հավաքման ու հրատարակման գործը սկսել էր Լանգերհանսը, որը չափագրել էր 6 մեծահասակ հայերի և երեք քրդերի, այնուամենայնիվ, նա կիսատ էր թողել իր հետազոտությունները[2]։

1882 թ. սկսած՝ Կովկասում կատարած իր դիտումներն ու չափագրումներն է հրատարակում Ռ. Էրկերտը, որը նախորդների համեմատ զգալի քայլ կատարեց ինչպես հայերի, այնպես էլ Կովկասի մյուս ժողովուրդների մարդաբանության ուսումնասիրության գործում[3]։

---

[1] E. Chantre, Recherches anthropologiques sur les Aissores, ou Chaldeens emigres en Armenie, Lyon, 1891; *Նույնի՝* Rapport sur une Mission scientifique en Armenie Russe, „Nouvelles archives des missions scientifiques", t. III, Paris, 1892, Qelles sont les donnees anthropologiques et archeologiques pour la connaissance de l' histoire ancienne de la population du Caucase..., 1891, Armeniens, esquisse historique et ethnographique („Bulletin de la Societe d' anthropologie et de biologie de Lyon", t. 13. Lyon et Paris, 1895), Recherches anthropologiques dans l' Asie Occidentale („Archives du Museum d' Histoire Naturelle de Lyon", t. VI, Lyon, 1895), *Հայերի մարդաբանությունը («Բազմավէպ», 1893—1894)։*

[2] P. Langerhans, Beiträge zur anatomischen Anthropologie („Zeitschrift fur Ethnologie", Bd. V, Berlin, 1873).

[3] R. Erkert, Korpermessungen russischer Völker („Zeitschrift fur Ethnologie", Heft IV, 1883), *Նույնի՝* Der Kaukasus und seine Völker, Leipzig, 1887, Kopfmessungen kaukasischer Volker („Archiv für Anthropologie", Bd. XVIII—XIX, 1891).

Է. Շանտրից անկախ, հայերի մարդաբանությամբ է սկսում զբաղվել նաև ավստրիացի բժիշկ, Բեռլինի համալսարանի պրոֆ. Ֆելիքս ֆոն. Լուշանը։ 1882 և 1884 թթ. Կիլիկիայում և Սիրիայում, բժիշկ Ասատուր Ալթունյանի հետ, նա չափագրում է 136 հայերի[4]։

Ֆ. Լուշանը իր մի շարք աշխատություններում ցույց էր տալիս, որ Փոքրը Ասիայի և սահմանակից երկրների ժամանակակից բնակիչները իրենց մարդաբանական հիմնական հատկանիշներով փաստորեն կրկնում էին տեղաբնիկ հնագույն ցեղերին, որոնց լավագույն ու շաղավաղված ժառանգորդները հայերն են[5]։

«Ամբողջ Արևմտյան Ասիան կանխապես բնակեցված էր միակերպ, մբթագույն թուխ մի ցեղի կողմից, որն ուներ ծայր աստիճան բաձր ու կարճ գլուխ, «խեթական» քիթ։ Հայկական տիպի ժողովուրդները հարազատ սերունդներն են խեթական բնիկների և իրենց ֆիզիկական հատկանիշներով շատ քիչ կամ բնավ չեն ազդվել եկվոր օտարականներից»,—գրում է Ֆ. Լուշանը[6]։

Ֆ.Լուշանը, զուգահեռներ անցկացնելով հին եգիպտական, խեթական, ասսուրական բարձրաքանդակների մարդկային պատկերների և ժամանակակից հայերի միջև, Առաջավոր Ասիայի մարդաբանական երբեմնի տիպը անվանեց հայատիպ (armenoid), որի կրողները խեթերի նման ունեին արծվային քիթ, բարձր ու կլոր գլուխ, տափակ ծոծրակ։

Ֆ. Լուշանից հետո ոմանք նախընտրեցին մարդաբանական այդ տիպը կոչել խեթական կամ առաջավորասիական։

Հայ մարդաբանության համար գիտական մեծ արժեք են ներկայացնում ռուս մարդաբան Ի. Պանտյուխովի դիտումները։ Վերջինս ծառայելով Կովկասյան զինվորական օկրուգում որպես բժիշկ, չափագրել ու քննել էր Վանում, Թիֆլիսում և Նախիջևանում գտնվող շուրջ 2300 հայ զինվորների[7]։

Ի. Պանտյուխովի բոլոր դիտումների ու ուսումնասիրությունների արդյունքը Կովկասի բնակչության մարդաբանական դասակարգումն էր, որի համաձայն Կովկասում գոյություն ունեին վրացական, հայկական, օսեթական, ադրբեջանական և այլ մարդաբանական խմբեր՝ իրենց ծագումով սերտորեն կապված հյուսիս-եվրոպական, սեմիտական, դինարյան և այլ մեծ մարդացեղերի հետ[8]։ Ի. Պանտյուխովի եզրակացությունն այն է, որ Անդրկովկասում միաժամանակ ապրել են երկարագանգ ու կլորադանգ ցեղեր, և վերջիններս ստրկացված են եղել առաջինների կողմից[9]։

---

[4] F. Luschan, Alttrojanische Gräber und Schadel, Berlin, 1882. Նույնի՝ Über alte Schädel von Assos und Cypern, Berlin, 1882.

[5] Petersen und v. F. Luschan, Reisen in Lykien, Mylias und Kibyratis Wien, 1899.

[6] F. Luschan, The early inhabitants of Western Asia („The Journal of the Royal Anthropological Institute of Great Britain and Ireland", vol. VLI, 1911, էջ 221—244)։

[7] И. И. Пантюхов, О росте некоторых племен Закавказского края («Медицинский сборник», № 50, Тифлис, 1889), Նույնի՝ Ахалкалакский уезд («Сборник Императорского Кавказского медицинского общества», Тифлис, 1892), Антропологические наблюдения на Кавказе («Записки Кавказского отделения Русского Географического общества», XV, 1893).

[8] И. И. Пантюхов, Антропологические типы Кавказа, Тифлис, 1893.

[9] И. И. Пантюхов, Расы Кавказа («Кавказский календарь на 1900 г.», Тифлис, 1900).

1897 թ. Վրաստանում բնակվող հայերի մարդաբանական տվյալներն է հրատարակում ռուս բժիշկ Ի. Տվարյանովիչը, որի ուսումնասիրության հիմքում ընկած էին 105 հայերի չափագրումները[10]։ 1898 թ. հայերի մարդաբանությանն է անդրադարձել ռուս մարդաբան Դ. Անուչինը, որն անձամբ չէր ուսումնասիրել հայերին, սակայն լայնորեն օգտագործելով Շանտրի, Էրկերտի, Պանտյուխովի և Տվարյանովիչի նյութերը, փորձել էր մի քանի հետևություններ անել[11]։

1907 թ. լույս է տեսնում Է. Էրիքսոնի աշխատությունը՝ նվիրված հայերի մարդաբանությանը, որտեղ ամփոփված էին հեղինակի կողմից 103 հայերի դիտումների արդյունքները[12]։

1912 թ. Բուխարեստում լույս է տեսնում ֆրանսիացի մարդաբան Է. Պիտարի՝ 124 ռումինահայերի (Դոբրուջա) գանգերի չափագրումների արդյունքներն ամփոփող ուսումնասիրությունը[13]։

Երեք տարի անց՝ համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ, Ավստրիայում 179 հայերի է չափագրում պրոֆ. Ռ. Պեոհը[14]։

1925—1937 թթ. Մոսկվայի պետական մարդաբանության ինստիտուտի արշավախումբը ըստ շրջանների ուսումնասիրում է կովկասյան էթնիկական խմբերը։ Արշավախմբի մասնակից, Բաքվի համալսարանի պրոֆ. Ն. Անսերովը հրատարակում է Դոնի Նախիջևանի հայերին վերաբերող մարդաբանական նյութերը[15]. այն հետագայում վերահրատարակեց Կ. Սալերը[16]։

1924 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայերի քաղաքացիական իրավունքների պաշտպանության հետ կապված քաղաքական կոմպանիայի ժամանակ լույս է տեսնում Ֆրանց Բոասի ուսումնասիրությունը՝ նվիրված ամերիկահայ բնակչության մարդաբանությանը (չափագրվել էին 128 հայեր. 74 տղամարդ և 54 կին)[17]։

1927 թ. լույս է տեսնում Կովկասի բնակիչների, այդ թվում նաև հայերի, մարդաբանությանը նվիրված Ա. Ջավախիշվիլու հոդվածը, որտեղ տեղ էին գտել նաև 799 հայերի դիտումների տվյալները[18]։

1930 թ. մարդաբան Մ. Ուգրելիձեն հրատարակում է նորածին հայ երե-

---

10 И. К. Тварьянович, Материалы к антропологии армян, С. Петербург, 1897.

11 Д. Н. Анучин, Армяне в антропологическом и географическом отношении (Сборник «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1893).

12 Э. В. Эриксон, К антропологии армян («Русский антропологический журнал», 1907. № 3—4).

13 E. Pittard, Contribution al'etude anthropologique des Armeniens („Bulletin de la societe roumaine des sciences", Bucarest, t. XXI, 1912, էջ 341—348).

14 R. Peoh, Bericht über die von der Wiener Anthropologischen Gesellschaft in den K.U.K. („Mitteilungen der Anthropologischen Gesellschaft in Wien", Bd. XXXXIV—XXXXVII, 1915, էջ 219—235, 1916, էջ 107—131, 1917, էջ 77—100).

15 Н. П. Ансеров, Нахичеванские на Дону армяне в антропологическом отношении („Русский антропологический журнал", 1926, № 15).

16 K. Saller, Leifaden der Anthropologie, Berlin, 1930, էջ 183.

17 F. Boas, Bemerkungen über die Anthropologie der Armenier („Zeitschrift für Ethnologie", Bd. LVI, Berlin, 1924, էջ 73—84).

18 A. Dschawachischwili, Die Rassenzusammensetzung der Kaukasus—Völker („Archiv für Anthropologie", Bd. XX, 1927, էջ 77—90).

խանների մարդաբանական տվյալներ՝ հիմնականում կապված դրանց ֆիզիկական զարգացման պրոցեսների հետ[19]։

1929 թ. լույս է տեսնում Ն. Օդնորալովի հոդվածը՝ նվիրված Նոր-Նախիջևանի (Դ. Ռոստով) հայերի գանգաբանական տվյալներին[20]։ Հեղինակը փորձում է մի շարք բացատրություններ տալ հայերի գանգի ու դեմքի ձևերի առաջացման ու զարգացման հարցերին։ Նույն հարցին էր նվիրված նաև Ս. Դանիլովի ուսումնասիրությունը՝ կատարված նույնպես Ռոստովում, Ն. Օդնորալովի հետ[21]։

Հայերի մարդաբանության գիտական մշակման, ամբողջացման ու հիմնավոր ուսումնասիրության գործում անգնահատելի են սովետական նշանավոր մարդաբան, պրոֆ. Վ. Բունակի ծառայությունները։ Դեռևս 1927 թ. հայերի գանգաբանությանը նվիրված իր մեծածավալ աշխատության մեջ Վ. Բունակը գիտականորեն հիմնավորեց հայատիպ մարդաբանական տիպի առաջացման ու կազմավորման ողջ պրոցեսը, որոշեց նրա տեղը մարդաբանական ռասաների շարքում[22]։ Վ. Բունակի առաջ քաշած շատ դրույթներ այսօր էլ ընդունվում են մարդաբանների կողմից։

1929 թ. Վ. Բունակը հրատարակում է Սևանա լճի շրջանից հայտնաբերած, երկաթի դարին վերաբերող հնէամարդաբանական նյութերը, համեմատական-մարդաբանական այլ նյութերի տվյալների հետ միասին[23]։

1934 թ. լույս է տեսնում Բ. Վիշնևսկու հաղորդումը Երևանի մոտ հայտնաբերված ուշ բրոնզի դարաշրջանին վերաբերող հնէամարդաբանական նյութերի մասին, որոնք հեղինակը սխալմամբ դիտում էր որպես ավելի վաղ ժամանակաշրջանի նյութեր[24]։

Փոքր Ասիայի հայերի մարդաբանական հատկանիշների ուսումնասիրության, Հայաստանի սահմաններից դուրս հայկական մարդաբանական տեղական խմբերի դասակարգման հարցերին էին նվիրված Կ. Զելցերի[25] և Օ. Հունգի[26] աշխատությունները։

Եռապատերազմյան տարիներին հայերի մարդաբանության հարցերին, Հյուսիսային Կովկասի, Վրաստանի և Ադրբեջանի հնէամարդաբանության և

---

19 М. Х. Угрелидзе, Физразвитие грузинских, армянских и русских новорожденных детей по антропологическим данным, Тбилиси, 1930.

20 Н. И. Одиоралов, О форме лица армян, населяющих окрестности гг. Ростова и Нахичевани-на-Дону («Бюллетень Общества анатомии и антропологии при Северо-Кавказском Государственном университете». Ростов на-Дону, 1929).

21 С. С. Данилов, Размеры и форма головы армян Ростовского-на-Дону округа («Бюллетень Общества анатомии и антропологии при Северо-Кавказском Государственном университете», Ростов-на-Дону, 1929).

22 В. В. Бунак, Crania Armeniaca (приложение к «Русскому антропологическому журналу», т. XVI. вып. 1—2, Москва, 1927).

23 В. В. Бунак, Черепа железного века из Севанского района Армении («Русский антропологический журнал», 1929, т. XVII, вып. 3—4).

24 Б. Н. Вишневский, Палеоантропологическая находка близ Эривани («Советская этнография», 1934, № 5).

25 G. Seltzer, The racial characterstics of Syriant and Armenians („Papers of the Peabody Museum of American Archeology and Ethnology, Harvard Universitety", vol. XIII, № 3, Cambridge, 1936).

26 O. B. Hunghes, The physical anthropology of native born Armenians,. Cambridge, 1938.

մարդաբանության առնչությամբ, անդրադարձել են սովետական մարդաբաններ Վ. Բունակը[27], Գ. Դեբեցը[28], Ն. Չեբոկսարովը[29], Յա. Ռոգինսկին[30], Մ. Գերասիմովը[31], Վ. Ալեքսեևը[32], Մ. Աբդուշելիշվիլին[33] և Ռ. Քասիմովան[34]։

Հայերի մարդաբանությամբ զբաղվելու փորձեր արել են նաև հայազգի ուսումնասիրողները, հիմնականում՝ բժիշկները։

Հայ բժիշկներից առաջինը Ա. Ալթունյանն էր, որ, ընկերակցելով Շանարին, 1882 և 1884 թթ. չափագրել էր հայերի։

Ավելի ուշ իր դիտումների արդյունքներն էր հրատարակել բժիշկ Վ. Մինասյանը, որը հիմնականում չափագրել էր հայ կանանց կոնքերը[35]։

Պոլսահայ մի բժիշկ (անունը անհայտ) 1908 թ. Վիեննայի մարդաբանության թանգարանին է նվիրում հայկական 43 գանգերի իր ժողովածուն, որը հրատարակվում է մի ավստրիացի մարդաբանի կողմից[36]։

1922—1924 թթ. հայերի մասին եղած մարդաբանական տեսությունները վերլուծող մի քանի գրքույկներով հանդես է գալիս ամերիկահայ փիլիսոփա Մ. Մինասյանը, որը փորձում էր ապացուցել, թե Հայկական լեռնաշխարհի բնակչությունն իր մարդաբանական տիպով մոտ է ալպիտկսնին։ Ըստ հետազոտողի՝ Հայաստանի նախկին բնակիչները կլորագանգ էին, որոնք հետագայում ձուլվեցին եկվոր երկարագանգ ցեղերին։ Ներկայիս հայերը երբեմնի խեթերի ժառանգորդներն են[37]։

---

27 В. В. Бунак, Антропологический состав населения Кавказа («Вестник Государственного музея Грузии», т. XIII—А, 1946), Նույնի՝ Древнейшие краниологические типы Передней Азии («Краткие сообщения института этнографии», II, 1947), Череп человека и стадии его формирования у ископаемых людей и современных рас («Труды института этнографии», т. XLIX, М., 1959).

28 Г. Ф. Дебец, Палеоантропология СССР («Труды Института этнографии», Новая серия, т. 14, М.—Л., 1948), Նույնի՝ Заселение Южной и Передней Азии по данным антропологии («Труды института этнографии», Новая серия, т. XVI, 1951), Антропологические типы населения СССР и некоторые проблемы этногенеза («Тезисы докладов этнографического совещания», М.—Л., 1956), Антропологические типы, Народы мира, Народы Кавказа, I, Москва, 1960.

29 Н. Н. Чебоксаров, Основные принципы антропологических классификаций («Труды института этнографии», Новая серия, т. XVI, 1951).

30 Я. Я. Рогинский, М. Г. Левин, Основы антропологии, Москва, 1955.

31 М. М. Герасимов, Восстановление лица по черепу («Труды института этнографии», Новая серия, т. XXVIII, 1955).

32 В. П. Алексеев, Итоги изучения палеоантропологии Кавказа («Պատմաբանասիրական հանդես», 1963, № 2), Նույնի՝ Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակչության երկու խմբի մասին (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 1)։

33 М. Г. Абдушелишвили, К палеоантропологии Самтаврского могильника, Тбилиси, 1954, Նույնի՝ Об антропологическом составе современного населения Армении («Труды института этнографии», т. 82, Антропологический сборник, IV, 1963), Антропология древнего и современного населения Грузии, Тбилиси, 1964.

34 Р. М. Касимова, Антропологическое исследование черепов из Мингечаура, Баку, 1960.

35 V. Minasian, Über einig Rassen-merkmalle der Armenierinnen („Wiener klinische Wochenschrift", 1907, Bd. 20, էջ 90)։

36 V. Giuffrida-Ruggeri, Contributo all anthropologia fisca delle regioni dinariche e danubiane e dell Asia Anteriore, „Firenze", 1908, էջ 42—48։

37 Մ. Մինասյան, Ծագումն ու նկարագիր հայ ազգին, հ. Ա, Ֆրեզնո, 1922, Նույ-

30-ական թվականներին հետաքրքիր դիտումներով ու նոր չափագրություններով հանդես եկան Պ. Էսապալյանը[38], Ս. Նանասյանը[39] և ֆրանսահայ մարդաբան Ռ. Քերումյանը[40]։

Ռ. Քերումյանը մի քայլ առաջ տարավ հայ մարդաբանական ուսումնասիրությունը։ Կարողանալով խորը վերլուծության ենթարկել հայտնի բոլոր նյութերը, չափագրելով և անձամբ դիտելով արտասահմանի տարբեր երկրներում ապրող հայերին, նա առաջին անգամ փորձեց համադրել արդեն կուտակված մարդաբանական հարուստ նյութերը և զատել առանձին հայկական խմբեր, ելնելով մարդաբանական հատկանիշների տարբերակների առկայությունից։

Սովետական կարգերի հաստատումից հետո մեծ ծավալ ստացած հնագիտական ուսումնասիրությունները նոր հնէամարդաբանական նյութեր ընծեռեցին մարդաբաններին։

Հայ հնէամարդաբանության համար միանգամայն նոր նյութեր տվեցին Ս. Լալայանի պեղումները Սևանա լճի ավազանում, որով հնարավոր դարձավ որոշակի պատկերացում կազմել երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակչության մարդաբանական կերպարի մասին[41]։

Իրար հաջորդող հնագիտական հայտնագործությունները էլ ավելի հարստացրին Հայաստանի հնէամարդաբանական նյութերը։ Առաջին անգամ Ջրառատ գյուղում (Հրազդանի շրջան), ապա Երևանի տարածքում գտնվող Շենգավիթի հնագույն բնակավայրի պեղումներից հայտնի դարձավ էնեոլիթյան դարաշրջանի բնակիչների մարդաբանական տիպը[42]։ Եղած նյութը համալրվեց Լճաշենի (միջին բրոնզի դարաշրջան) և Գառնիի (էնեոլիթ, անտիկ դարաշրջաններ) դամբարանների նորահայտ հնէամարդաբանական տվյալներով[43]։

Հնէամարդաբանական նյութերի ուսումնասիրման գործում հատկապես անհրաժեշտ է նշել մարդաբաններ Վ. Ալեքսեևի և Հ. Ազիզյանի ծառայությունները. նրանք առաջին անգամ լուրջ քննության ենթարկեցին էնեոլիթյան, բրոնզիդարյան և հաջորդ դարերի գանգաբանական տվյալները։

Ընդառաջելով ՀՍՍՀ ԳԱ նախագահության միջնորդությանը ՀՍՍՀ Մինիստրների սովետը 1970 թ. որոշում ընդունեց ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում ստեղծել մարդաբանական ուսումնասիրությունների լաբորատորիա։

նի՝ Բնիկ նախնիք հայոց, Ֆրեզնո, 1924, Ցեղային բաղկացություն ներկա հայության, Ֆրեզնո, 1924, Տավրոսյան եղբայրակցություն, Ֆրեզնո, 1924, Նոր օրվան տեսիլքը, Ֆրեզնո, 1924։

38 Պ. Էսապալյան, Հայերը մարդախոսական տեսակետ («Հանդէս ամսօրեայ», 1934, № 5—7, 8—10, 11—12, 1935, № 1—2)։

39 С. П. Нанасян, К вопросу о физическом развитии армян («Антропологический журнал», 1934, № 1—2).

40 R. Kherumian, Les Armeniens, Race origines ethno-raciales, Paris, 1941, նույնի՝ Introduction a l' anthropologie du Caucase. Les Armeniens, Paris, 1943.

41 Е. А. Лалаян, Археологические раскопки в Новобаязетском уезде ССР Армении («Русский антропологический журнал», т. 17, вып. 3—4, 1929).

42 Г. Азизян, О черепах из энеолитических погребений в районе Шенгавита («Պատմա-բանասիրական հանդես», Ереван, 1963, № 3).

43 Г. Азизян, Палеоантропологический материал из погребений у селения Лчашен («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3)։

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Ճաղարյանի գլխավորությամբ նորաստեղծ լաբորատորիան մեծ եռանդով սկսեց իր գործունեությունը։ Ա. Ճաղարյանը և նրա աշխատակիցները գիտական բարեխղճությամբ ձեռնարկեցին Լճաշենի և Վահանավանքի պեղումներից հայտնաբերված գանգերի հիման վրա դեմքի վերականգնման ու մորֆոլոգիական ուսումնասիրման գործը։

Կասկած չի կարող լինել, որ իր գոյության 100-ամյակը բոլորող հայ մարդաբանությունը միայն մեր օրերում կարող է գիտական լուրջ հիմքերի վրա դրվել, որն է՛լ ավելի լայն հնարավորություններ կընձեռի հայ ժողովրդի էթնիկական ու ժամանակակից մարդաբանության ուսումնասիրության և դեմքի պլաստիկ վերականգնման ուղղությամբ կատարվող աշխատանքների համար։

ИЗ ИСТОРИИ ИЗУЧЕНИЯ АНТРОПОЛОГИИ АРМЯН

Л. А. БАРСЕГЯН

Резюме

Для решения некоторых вопросов этногенеза армян первостепенное значение приобретают антроплогические данные об армянах. Основоположником научного изучения антропологии армян считается профессор Лионского университета Э. Шантр. Австрийский врач, профессор Ф. Фон Лушан, изучив антропологические данные жителей Передней Азии, древний антропологический тип наименовал как «арменоидный», который в научном мире известен был еще как «хеттский» или «переднеазиатский».

Большую ценность для характеристики антропологического типа древних и современных армян имеют работы И. П. Пантюхова, И. К. Тваряновича, Д. Н. Анучина, Н. И. Ансерова, А. Н. Джавахишвили, В. В. Бунака, Г. Ф. Дебеца и других специалистов. Изучением антропологии армян занимались также армянские ученые. Среди них особое место занимают А. Алтунян, В. Минасян, П. Эсапалян, С. Нанасян и Р. Керумян.

В настоящее время под руководством проф. А. Дж. Джагаряна в Институте археологии и этнографии АН Арм. ССР ведутся работы по пластической реконструкции лица человека, а также по изучению древней и современной антропологических данных жителей Армянского нагорья.